

Պատրաստ եք սպասել 229 տարի



Այս տարվա Համաշխարհային տնտեսական ֆորումի Գեներալիսի Ենթակառուցվածքի գլոբալ զեկույցը հետաքրքիր առանձնահատկություն ունի: Ձեկույցի հեղինակները առաջարկում են օճային հաշվարկել, թե քանի տարի է պետք յուրաքանչյուր երկրին՝ գեներալիսի անհավասարությունը հաղթահարելու համար: Հայաստանի վերաբերյալ պատասխանը 229 տարի է՝ հաշվի առնելով առկա միտումները: Մինչդեռ աշխարհի առավելագույն 107 երկրում առկա միտումները պահպանվելու պարագայում գեներալիսի բացը վերացնելու համար կպահանջվի 83 տարի, այսինքն՝ այդ երկրներում այսօր ծնված աղջիկները հնարավոր է և տեսնեն հավասարության արդյունքները:

Աշխատող մայրերն ունենում են ավելի հաջողակ դուստրեր



Հարվարդի Բիզնես դպրոցի ուսումնասիրության հեղինակները փորձել են պարզել աշխատող մայրերի ազդեցությունը իրենց երեխաների հետագա հաջողության վրա՝ առաջարկելով պատասխանել հետևյալ հարցին. արդյոք ձեր մանկության ժամանակ ձեր մայրը երբևէ աշխատել է: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ մոր աշխատելը երեխաների վրա թողնում է երկարատև դրական ազդեցություն ոչ միայն որոշակի ինքնուրույնություն ձևավորելու հարցում, աշխատող մայրերի դուստրերի եկամուտը ԱՄՆ-ում 5200 դոլարով ավելի բարձր էր, քան չաշխատողներինը:

Երկրներ, որտեղ քանդվում են «ապակյա առաստաղները»



Սկանդինավյան երկրներում՝ Իսլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում, կանայք ու տղամարդիկ ունեն նույն հնարավորությունները աշխատանքի համար. փաստում է բրիտանական The Economist պարբերականը՝ ներկայացնելով այսպես կոչված «ապակյա առաստաղի» ցուցանիշի վրա հիմնված վարկանիշային աղյուսակը: Այն կազմելիս հաշվի են առնվել՝ աշխատավարձի չափը, բարձրագույն կրթությունը ստանալու հնարավորությունը, երեխայի խնամքի ծախսերը, հողության ու ծննդաբերության հետ կապված իրավունքները, ծննդաբերությունից հետո աշխատանքի վերադառնալու հնարավորությունները, ղեկավար պաշտոններում ներկայացվածությունը: Նշենք, որ «ապակյա առաստաղը» կանանց առջև ծառայող այն անտեսանելի խոչընդոտներն են, որոնք արգելափակում են նրանց առաջընթացը:

# Աշխարհը և քաղաքականությունը



Ինչպե՞ս են ազդում կանանց ու տղամարդկանց զբաղվածության վրա հասարակությունում առկա կարծրատիպերը

2016 դեկտեմբեր

Անվճար հավելված [www.WomenNet.am](http://www.WomenNet.am)



## ՀՎԱՍԱՐ ԲԱՐՈՂԱՐՇԱՎ.

### մեկ ֆայլ առաջ դեղի ավելի արդար հասարակություն

Ուղիղ մեկ տարի առաջ մեկնարկեց Օբսֆան և «ՕբսեՋն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի «ՀՎԱՍԱՐ» քարոզարշավը: Այն իրականացվում է Օբսֆանի «Հավասարեցնել» (EVEN IT UP) գլոբալ քարոզարշավի շրջանակներում՝ WomenNet.am կայքի և «Ընտանիքի ակադեմիա» ՀԿ-ի հետ համատեղ:

Ներկայացնող ֆոտոպատմությունները, ոչ կանացի մասնագիտություններ ընտրած կանանց լուսանկարները... Քարոզարշավը շարունակվեց նոր թափով՝ անդրադառնալով Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում և ընտանիքում անհավասարության ու կանանց նկատմամբ խտրականության դրսևորումներին, որոնց պատճառով հասարակության ավելի քան կեսի ներուժը մնում է անտեսված ու չպահանջված: Քարոզարշավի համար հիմք ծառայեց նաև «Կանանց և տղամարդկանց տնտեսական գործունեությունը Հայաստանում» հետազոտությունը, որն իրականացվեց ԵՊՀ գեներալիսի հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ համագործակցությամբ՝ բացահայտելով կանանց տնտեսական առաջխաղացումից դեպի քաղաքական մասնակցությունը: Քարոզարշավի համար հիմք ծառայեց նաև «Կանանց և տղամարդկանց տնտեսական գործունեությունը Հայաստանում» հետազոտությունը, որն իրականացվեց ԵՊՀ գեներալիսի հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ համագործակցությամբ՝ բացահայտելով կանանց տնտեսական առաջխաղացումից դեպի քաղաքական մասնակցությունը տանող կապը, վերահանելով առկա խնդիրները և առաջարկելով դրանց լուծման ուղիները: Քարոզարշավի ուղադրության կիզակետում էին կանանց քաղաքական մասնակցության ընդլայնմանն ուղղված օրենսդրական բացերը, մասնավորապես, Ընտրական օրենսգրքում կատարվող փոփոխությունները, ՏԻՄ ընտրություններում կանանց ակտիվ ներգրավման հիմնախնդիրը... Տարին ավարտվեց «Հանենք հավասարության. Կանանց քաղաքական մասնակցության տեսլականը» թեմայով լրագրողական մրցույթի մրցանակաբաշխությամբ: Ամփոփելով տարին՝ քարոզարշավի կազմակերպիչները նշեցին, որ այն ընդամենը մեկ քայլ առաջ էր դեպի հավասարություն, և որ «ՀՎԱՍԱՐ» քարոզարշավի հիմնական անելիքները դեռ առջևում են...

Մախձեռնության նպատակն էր աջակցել Հայաստանում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության իրականացմանը՝ բարձրաձայնելով այս ուղղությամբ առկա հիմնախնդիրները և օգնելով հաղթահարելու ավելի արդար հասարակություն ունենալու ճանապարհին ծառայող խոչընդոտները: Քարոզարշավը մեկնարկեց լուսանկարչական ցուցահանդեսով, որի շրջանակներում մի շարք հայտնի տղամարդիկ և կանայք լուսանկարվել էին՝ ձեռքերը հավասարության նշանի պես պարզած և հավասարության գաղափարի իրենց կոչ-ուղերներով. «Հավասար ծնվում են», «Հավասարությունը ուժ է», «Հավասարությունը կենսաձև է», «Հավասարությունը դաստիարակություն է»... Հետագայում ճանաչելի դարձավ «ՀՎԱՍԱՐ»-ի լոգոյի ներքո լուսանկարվեցին նաև Հայաստանի քաղաքական գործիչները՝ ազդարարելով կանանց քաղաքական մասնակցության ընդլայնման անհրաժեշտությունը քաղաքական դաշտում: Լուսանկարիչ Արամ Կիրակոսյանի աշխատանքներում միավորվեցին նաև գյուղաբնակ կանանց աշխատանքային առօրյան

## Global Gender Gap Report-2016 Անհավասարությունը Հայաստանում վերացված է 67 տոկոսով

Համաշխարհային տնտեսական ֆորումը հրատարակել է 2016-ի Գեներալիսի Ենթակառուցվածքի գլոբալ զեկույցը, ըստ որի Հայաստանը զբաղեցրել է 102-րդ տեղը 144 երկրների շարքում:

Գեներալիսի Ենթակառուցվածքի ցուցանիշը հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից 2006 թվականից չորս առանցքային ոլորտներում՝ տնտեսություն, քաղաքականություն, կրթություն, առողջապահություն և արտադրություն է կանանց ու տղամարդկանց հնարավորությունների միջև եղած տարբերությունը այդ ոլորտներում: Անցած տարիների ընթացքում Հայաստանը վատթարացնում էր իր դիրքերը՝ 71-րդ տեղից 128 երկրից (2007) մինչև 105-րդ տեղ 145 երկրներից (2015): Վարկանիշի արժեքով, որը հաշվարկվում է 0-ից (անհավասարություն) մինչև 1 (հավասարություն) սահմաններում, այդ ընթացքում արձանագրված առաջընթացը ընդամենը 0,003 էր: Այս տարի վարկանիշի արժեքը աճել է անցյալ տարվա համեմատ 0,662-ից մինչև 0,669: Դա նշանակում է, որ գեներալիսի անհավասարությունը Հայաստանում վերացված է 67%-ով, սակայն հետագա յուրաքանչյուր քայլը կատարվում է շատ դանդաղ՝ հարյուրերորդականների չափով և մեծ ջանքեր է պահանջում պետությունից ու հասարակությունից: Վարկանիշային աղյուսակի առաջին տեղը զբաղեցնող Իսլանդիայի դեպքում գեներալիսի բացը վերացված է 87,4%-ով: Ընդհանուր առմամբ, 144 երկրից 65-ը վերացրել են անհավասարությունը 70-80%-ով, և 65-ը՝ 60-70%-ով, և 10 երկիր՝ 50-60 %-ով: 50 տոկոսից ցածր ցուցանիշ ոչ մի երկիր չունի:





### Թվերն են խոսում

Կանայք ավելի ցածր են վարձատրվում, քան տղամարդիկ Որո՞նք են պատճառները



Հայաստանի աշխատանքային շուկայում կանանց և տղամարդկանց միջին աշխատավարձի միջև տարբերությունը կազմում է 34%, իսկ եկամտունների մասով տարբերությունն էլ ավելի մեծ է և հասնում է 40%-ի: Համեմատության կարգով, ԵՄ ամրամ երկրներում այս տարբերությունը միջինը 15,9% է, իսկ աշխարհի միջինացված ցուցանիշը 22,9% է...

Փորձագետները բացատրում են կանանց ու տղամարդկանց աշխատանքի վարձատրության շոշափելի խզումը աշխատանքի շուկայում առկա ուղղահայաց (կարիերայի հիերարխիայի անհավասար հասանելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և զբաղվածության ոլորտների) խտրականությանը:

• Հայաստանի բնակչության 52%-ը կանայք են և 48%-ը՝ տղամարդիկ, սակայն տնտեսապես ակտիվ են տղամարդկանց 73%-ը և կանանց ընդամենը 56%-ը:

• Թեպետ զբաղված կանանց թվում բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողների մասնաբաժինը 58% է, իսկ զբաղված տղամարդկանց թվում կրթված կադրերը 45% են, դա դեռևս չի մշակակում, թե կանայք ավելի լավ են վարձատրվում:

• Կանայք հիմնականում զբաղված են ցածր վարձատրվող բնագավառներում, ինչպիսիք են՝ գյուղատնտեսության, ծառայությունների, հանրային կառավարման, կրթության, առողջապահության և արվեստի ոլորտները, մինչդեռ առավել բարձր վարձատրվող ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսական-ապահովագրական և ՏՏ ոլորտները, կանայք ավելի քիչ են ներկայացված: Այսպիսի, հորիզոնական կոչվող, խտրազատման հիմքում կանանց մասնագիտական սահմանափակ կողմնորոշումն է:

• Ի դեպ, բնագիտության և մաթեմատիկայի միջազգային ստուգատեսներում աղջիկներն ավելի բարձր առաջադիմություն են արձանագրում, ինչը բացառում է վերջիններիս մոտ ավելի թույլ զարգացած գիտելիքների ու հմտությունների պատճառով հետազայում մասնագիտական խտրական կողմնորոշման վարկածը: Ուղղակի կանայք մասնագիտանում են կարծրատիպային մոտեցումների համապատասխան «կանանց համար ավելի հարմար» ոլորտներում:

• Ուղղահայաց խտրազատումը առաջ է գալիս այ պատճառով, որ կանայք ավելի քիչ վարձատրվող ստորին և միջին օղակներում են առավել ներկայացված: Կանայք ավելի շատ աշխատաշուկայի պետական հատվածում են ներկայացված, ինչը նույնպես խորացնում է խտրազատումը: Այսպես, պետական հատվածում զբաղվածների շուրջ 60%-ը կանայք են, բայց նրանց մեծ մասը ստորին օղակներում է զբաղված: Պետական հատվածում բարձրագույն պաշտոնների 82%-ը և գլխավոր պաշտոնների 55%-ը զբաղեցնում են տղամարդիկ:

• Նույնիսկ այն բնագավառներում, որտեղ կանայք մեծամասնություն են կազմում (առողջապահություն, կրթություն, մշակույթ, սոցիալական ապահովություն, գյուղատնտեսություն), նրանք հիմնականում ներկայացված են ավելի քիչ վարձատրվող ստորին և միջին օղակներում:

• Աշխատանքի վարձատրության տարբերությունները միշտ չէ, որ մեղմանում են կանանց կրթական բարձր մակարդակով. պատճառը դժվարություններն են մասնագիտական առաջխաղացման հարցում, որոնք պայմանավորված են կանանց կարիերային աճը խոչընդոտող սոցիալական կարծրատիպերով, մաս՝ աշխատանքն ու ընտանեկան պարտականությունները համատեղելու հնարավորությունների բացակայությամբ: Պատահական չէ, որ ընտանեկան պատճառներով աշխատանքը կորցրած անձանց 100 տոկոսը կանայք են:

• Թեև կառավարությունը որպես զբաղվածության և սոցիալական խնդիրների լուծման արդյունավետ ճանապարհ է դիտում փոքր և միջին ձեռնարկությունների առաջացրել զարգացումը, կանանց ներկայացվածությունը փոքր և միջին բիզնեսի ոլորտում ընդամենը 10% է, նույնիսկ միկրոբիզնեսում կանանց թիվը 25%-ից ոչ ավելի է:

• Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվում կանանց մասնաբաժինը 68% է կազմում, ընդ որում, այդ կանանց 40%-ն ունի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն: Տնտեսապես ոչ ակտիվ կանանց մեծ մասը տնային տնտեսուհիներ են, որոնք զբաղված են չվարձատրվող աշխատանքով: Կանայք կատարում են տնային տնտեսություններում չվճարվող աշխատանքի մեծ մասը, որը չի ստանում արժեքային որևէ գնահատական և չի արտացոլվում ազգային հաշիվների համակարգում:

## Տղամարդիկ ընթանիքը դա հողներն են, իսկ կանան՞ջ

Փորձագետների կարծիքով՝ տղամարդկանց և կանանց աշխատավարձերի միջև առկա տարբերությունների երկու գլխավոր պատճառներն են՝ կանանց չնչին ներգրավվածությունը բարձր վարձատրվող աշխատանքներում և նրանց անհավասարաչափ բարձր, համեմատած տղամարդկանց հետ, ծանրաբեռնվածությունը տնային աշխատանքներով, ներառյալ՝ երեխաների և մեծահասակների խնամքը: Դրա հետ մեկտեղ առկա էին նաև կարծրատիպային բնույթի հիմնավորումներ, որոնք արդարացնում են կնոջ աշխատանքի ստորադասումը տղամարդու կատարած աշխատանքին, հատկապես վարձատրության առումով: Դրանցից մեկը «տղամարդը տուն պահողն է»...

...Արմինեյն հայաստանյան մասնավոր ընկերություններից մեկում պատասխանատու աշխատանք է վստահված: Օրական 9-11 ժամ աշխատող կինը պատմում է, որ օրեր են եղել, անգամ ընդմիջելու ժամանակ չի ունեցել: «Աշխատել եմ միշտ նվիրված, որևէ անգամ որևէ դժգոհություն չի եղել: Գործատուն էլ, տնօրենն էլ միշտ գովեստով են խոսել իմ կատարած աշխատանքի մասին», - պատմում է Արմինեն:

Աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ նրա առաջարկին, սակայն, պատասխանել են, առայժմ չեն կարող՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով: Ընկերության աշխատակիցները չգիտեն, թե ով ինչքան աշխատավարձ է ստանում:

Մի անգամ պատահաբար Արմինեն պարզում է, որ ընկերության մեկ այլ աշխատակից, ով իր աշխատանքի ծավալի 1/3-ն էլ չի կատարում, իր չափ աշխատավարձ է ստանում:

«Իմ աշխատանքային պարտականությունների մեջ մտնում է նաև մրցակից ընկերությունների աշխատանքի մոնիթորինգի իրականացումը, թերացումների դեպքում ես պետք է խոսեմ այդ մասով պատասխանատու աշխատակիցների հետ ու համեմարարություններ տամ նրանց: Պարզվում է՝ իմ տղամարդ գործընկեր, ում հնարավորություն են տվել նաև երկրորդ աշխատանք ունենալու, ով օրվա կեսը գրասենյակում էլ չի լինում, ստանում է իմ չափ աշխատավարձ: Ես ասում եմ՝ գիտե՞ս, հարգելի գործընկեր, այս աշխատանքը լավ չես կատարել, ինչի հետևանքով մեր ընկերությունը այս մասով հետ է ընկել մրցակիցներից, նա ինձ պատասխանում է՝ 300 հազար դրամ աշխատավարձով դու եղբան բան կանե՞ս», - պատմում է կինը:

Նա իր դժգոհությունը ներկայացնում է գործատուին: Տղամարդ աշխատակցի «բերանբացության» պատճառով գործատուն նրա վրա բարկանում է, բայց Արմինեի աշխատավարձն այդպես էլ չի բարձրացնում...

Արմինեն խոստովանում է. նախկինում չէր հավատում, որ աշխատավարձերի չափերում հնարավոր է գեներային ճեղքվածք: Գործատուի հետ խոսակցությունից հետո մի քանի փոքրիկ ուսումնասիրություն է անում ու որոշ եզրակացությունների գալիս:


«Գիտե՞ք, կարծում եմ, իրոք դժվար է կոտրել կարծրատիպերը: Երևի մտածում եմ՝ կինը չէ, որ ընտանիքի հոգսը պետք է թեթևացնի: Այլ մեկնաբանություն չեմ գտնում, թե ինչու տղամարդ աշխատակիցը, ով իմ կեսի չափ էլ չի աշխատում ու մասնագիտական ունակություններով շատ է գիջում ինձ, պետք է «տուն պահող» դիտվի ու ավելի բարձր աշխատավարձ ստանա, ո՞վ ասաց, որ ինձ վրա դրված չէ ընտանիքը պահելու առաքելությունը», - ասում է նա:

### Ի՞նչ են փաստում հետազոտությունները

Հայ հասարակությունում ընտանիքի նյութապես ապահովումը հիմնականում դրված է տղամարդու վրա, սակայն այս դիրքորոշումն առավել տարածված է տղամարդկանց, քան կանանց շրջանում: Այսպես, տղամարդկանց 67,8%-ը պատասխանել է, որ տղամարդն է նյութապես ապահովում ընտանիքը, 2,5%-ը՝ կինը, դրա հետ մեկտեղ 29,1%-ը գտնում է, որ և՛ կինը, և՛ տղամարդը հավասարապես մասնակցություն ունեն ընտանիքը նյութապես ապահովելու գործում:

Այս մասին են փաստում Օքսֆորդի և «ՕքսեՑեն» հիմնադրամի «Հավասար» քարոզարշավի շրջանակներում ԵՊՀ գեներային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից իրականացված «Կանանց և տղամարդկանց տնտեսական գործունեությունը Հայաստանում» հետազոտության տվյալները:

### Երբ կինն ավելի է աս և վասակում...



... Արմենն ու Կարինեն 14 տարի ամուսնացած են, երկու երեխա ունեն: Ամուսինը պետական համակարգում է աշխատում՝ 3 օր տանն է, չորրորդ օրն աշխատում է 24 ժամ: Ազատ օրերին տաքսի է քշում: Կարինեն վարսավոր է: Աշխատում է տանը՝ առանձնացված սենյակում: Ամսական կտրվածքով ամուսնուց շատ է վաստակում: Հարցնում են՝ երբեք ավելի շատ գումար աշխատելն առիթ հանդիսացե՞լ է, որ ամուսնուղ չինազանդվես: Ծիծաղում է:

«Ընդհակառակը, լիարժեքության զգացում եմ ունենում: Չէ՞ որ դժվար ժամանակներում կարողանում եմ օգնել ընտանիքին: Ամուսնու աշխատած գումարը կբավականացնի մեր սնվելուն էլ, հագնելուն էլ: Բայց մի՞թե դրանով կյանքը սահմանափակվում է», - ասում է կինը:

Արմենն ավելացնում է, որ կինն իրեն միշտ հպարտանալու առիթ է տալիս. «Բայց միշտ ասում եմ՝ քեզ մի՞ ծանրաբեռնի: Թեև տեսնում եմ, որ հաճույքով է իր գործն անում»:

«Հայաստանում պատանիները, որոշ դեպքերում՝ նաև աղջիկները, գտնում են, որ կնոջ աշխատելու պարագայում անպայմանորեն պետք է տղամարդու աշխատավարձի չափն ավելի բարձր լինի, քան կնոջը, քանի որ հակառակ դեպքում կինը կարող է օգտագործել այդ հանգամանքը՝ ցուցաբերելով «անհնազանդություն» ընտանեկան հարաբերություններում». փաստում է «Կանանց և տղամարդկանց տնտեսական գործունեությունը Հայաստանում» հետազոտությունը:

### Մասնահավեր

## Մե՞նք անեստում ենք կանանց ներուժը



Գեներային անհավասարությունը Հայաստանի աշխատանքի շուկայում բնորոշվում է մարդկային կապիտալի՝ ի դեմս կանանց, ոչ արդյունավետ օգտագործմամբ: Պետությունը բավականին մեծ ներդրումներ է կատարում կանանց կրթության մեջ, բայց հետագայում բարձրագույն կրթություն ունեցող կանանց զգալի մասը կամ համարվում է գործազուրկների շարքերը, կամ բավարարվում ստացած գիտելիքներով:

Ի՞նչ արժե գեներային հավասարությունը  
McKinsey&Co ընկերությունը հաշվարկել է, որ լիարժեք գեներային հավասարությունը կարող էր 26% կամ 28 տրիլիոն դոլար ավելացնել համաշխարհային համախառն ներքին արդյունքին մինչև 2025 թ.: Նշենք, որ համաշխարհային ՀՆԱ-ի 28%-ով ավելացումը մոտավորապես համարժեք է Ամերիկայի և Չինաստանի տնտեսություններին՝ միասին վերցրած:

րի, մասնագիտական որակների մակարդակից ցածր աշխատանքներով: Ստացվում է, որ անհատի և պետության ջանքերի, այդ թվում՝ ֆինանսական ներդրումների արդյունքն անհետ կորչում կամ անժամանակ սառեցվում է: Մենք անեստում, կորցնում ենք մեր երկրի անենաթանկ կապիտալներից մեկը՝ բարձրագույն կրթություն (մասնագիտություն) ունեցող կնոջ ներուժը, և դա բավականին լուրջ ազդեցություն է թողնում պետության զարգացման վրա:

Եթե Հայաստանում ավելի շատ կանայք աշխատեին իրենց մասնագիտությամբ և ոչ թե իրենց կամքով կամ իրենց կամքի հակառակ սահմանափակվելով միայն տնային տնտեսուհու կարգավիճակով, ապա Հայաստանի տնտեսության ՀՆԱ-ն առնվազն 50-60 միլիոն դոլարով ավելին կլիներ՝ փաստում է Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի 2016-ին անցկացված «Կանանց նկատմամբ խտրական դրսևորումների արտորոշիչ ուսումնասիրությունը»:

Ի դեպ, ընտանեկան բռնության հետևանքով երկրին հասցրած տնտեսական վնասը, նախնական հաշվարկներով, կազմում է տարեկան 400 հազարից մինչև 1,1 մլն դոլար:



Երկրնսրանի առջև

Ընտանիքն ու աշխատանքը համատեղելու հնարավորություններ



Դպրոցները փակվելու կամ արձակուրդ գնալու պես աշխատող շատ ծնողներ կանգնում են բարդ խնդրի առաջ...

խային վերցրել ու վերադարձել աշխատանքի»,- պատմում է նա:

Երեխայի հիվանդության պատճառով աշխատանքի չգնալը, շաբաթ օրերը երեխայի հետ աշխատանքի գնալը, երեխային մանկապարտեզից վերցնելու համար մի քանի անգամ շուտ դուրս գալը բացասաբար են անդրադառնում մասնագիտությամբ հաշվապահի կարիերայի վրա:

«Չետո ես սկսեցի փնտրել այնպիսի պայմաններով աշխատանք, որպեսզի ինքս կարողանամ երեխային դպրոցից վերցնել: Բայց կիսատ աշխատանքային օրով գործ այդպես էլ չգտա»,- ասում է կինը:

Մեկ ամիս տևած փնտրություններից հետո Արմինեն կարողանում է նոր գործ գտնել՝ աշխատանքը վերջացնում է ժամը 18-ին:

«Ես զարմանում եմ. ինչո՞ւ է մանկապարտեզում աշխատանքն ավարտվում է 16:30-17:00-ին, երբ երեխաների մեծ մասի ծնողներն աշխատանքն ավարտում են 18-18:30-ին: Կամ գոնե լինեն պետական երկրորդայն դպրոցներ, որոնք քիչ թե շատ կթեթևացնեն ծնողների հոգսերը»,- մտահոգություններն է հայտնում նա:

Հայկուհու ընտանիքում բոլորն աշխատում են՝ ինքը, ամուսինը, սկեսրայրը, սկեսուրը: Երկու երեխա ունի:

«Մեկ տարի ֆիզարձակուրդում մնալուց

հետո գործատուն անընդհատ կանչում էր: Պատասխանատու գործ է, տեսնում էր՝ նորեկները չեն կարողանում հասցնել: Հասկանում եմ իրեն, բայց ո՞ւմ խնամքին թողնեն մեկ տարեկան երեխայիս»,- պարտադիր է Հայկուհին: Ի վերջո, տատիկն ընդառաջում է, աշխատանքից դուրս գալիս, որ թոռնիկներին պահի:

«Ծնված օրվանից երեխայիս հերթագրել եմ՝ մանկապարտեզ ընդունվելու համար: Հինգ փոքրիկս 2,6 տարեկան է, մանկապարտեզ չեն ընդունում, ասում են՝ դեռ հերթը չի հասել, երբ տարեկանից ենք ընդունելու: Տատիկն ու պապիկը վազում են երեխաների հետևից, պապիկը մեծին դպրոցից բերում է, էլի աշխատանքի գնում, շատ անգամներ ուսուցչին ենք խնդրել, որ մոտեցնի տաքսուս ու տուն ճանապարհի, մի քանի անգամ ամուսինս է գործից դուրս եկել, որ երեխային դպրոցից տուն հասցնի»,- ասում է նա:

Այս պայմաններում երեխաներին չեն կարողանում երգի, պարի, լողի կամ էլ մեկ այլ խմբակ տանել: Երիտասարդ գույցն այս պայմաններում երրորդն ունենալու մասին չի էլ ուզում լսել:

«Գիտեք, եթե լինեն 1-2 տարեկան երեխայի խնամքի կենտրոններ, թեկուզ վճարովի, կարելի է մտածել, բայց այս պարագայում պետությունը աշխատող ծնողների համար որևէ հարմարություն չի ստեղծում, բայց չէ՞ որ նրանց վճարած հարկերից էլ է բյուջեն լցվում»,- նկատում է երիտասարդ կինը:

Թեպետ «Լախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրով» նպատակ է դրվել մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%-ի, սակայն 2015 թ. տվյալներով՝ նախադպրոցական հիմնարկներ է հաճախել 0-5 տարեկան երեխաների միայն 28,7%-ը, ընդ որում, գյուղական վայրերում՝ ընդամենը 16,6%-ը: Իսկ 0-2 տարեկան երեխաների միայն 6,2%-ն է ընդգրկված նախադպրոցական հիմնարկներում:

\*\*\*

Հայաստանում ընտանիքակենտրոն քաղաքականության բացակայությունը ստիպում է երիտասարդ մայրերին կամ հրաժարվել առանց այդ էլ մեծ դժվարությամբ ձեռք բերած աշխատանքից, կամ էլ, լավագույն դեպքում, աշխատել կես դրույթով: Այսպես, 2010-2014 թթ. տվյալների համաձայն՝ կանայք Հայաստանում առավելագույնը մեկ քաղաքական են աշխատաշուկայում ոչ լրիվ աշխատանքային օրով: «Այս միտումը գնալով ավելի է խորացել. կանայք ճշված ժամանակահատվածում գնալով ավելի շատ են ներգրավվել աշխատաշուկայում ոչ լրիվ աշխատանքային օրով. 2010-2014 թվականների ընթացքում այս ցուցանիշը 58,2%-ից դարձել է 63,4%»,- ճշված է «Կանանց և տղամարդկանց տնտեսական գործունեությունը Հայաստանում» հետազոտության մեջ:

Ըստ Ասիական զարգացման բանկի 2015 թվականի գնահատման տվյալների՝ բարձրագույն կրթությամբ կանայք դառնում են գործազուրկ թե՛ վերջիններիս որակավորման՝ աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանելու և թե՛ այն պատճառով, որ ամուսնանալով կանգնում են ընտանիքի և աշխատանքի համատեղման խնդրի առջև:

Ըստ Ասիական զարգացման բանկի 2015 թվականի գնահատման տվյալների՝ բարձրագույն կրթությամբ կանայք դառնում են գործազուրկ թե՛ վերջիններիս որակավորման՝ աշխատաշուկայի պահանջներին չհամապատասխանելու և թե՛ այն պատճառով, որ ամուսնանալով կանգնում են ընտանիքի և աշխատանքի համատեղման խնդրի առջև:

Կանայք և ճնային աշխատանքը

Հագալիս վիճակագրական ծառայության անցկացրած՝ ժամանակի բյուջեի ուսումնասիրությունը (2008) ցույց է տալիս, որ կանայք տնային տնտեսության աշխատանքի և ընտանիքի անդամների խնամքի համար ծախսում են միջինը 5 ժամ 12 րոպե, իսկ տղամարդիկ այդ աշխատանքին հատկացնում են միջինը 1 ժամ 03 րոպե: Իսկ 0-9 տարեկան երեխաների խնամքը կանանցից 6,6 անգամ ավելի շատ ժամանակ է խլում, քան տղամարդկանցից: Տղամարդիկ գրեթե 30%-ով ավելի շատ ազատ ժամանակ են ունենում, քան կանայք: Օգտագործվող ժամանակի կառուցվածքը ցույց է տալիս հայ հասարակությունում գոյություն ունեցող կարծրատիպերը ընտանիքում գեներային դերերի բաշխման առնչությամբ: Կանայք են կրում հիմնական պատասխանատվությունը տնային աշխատանքի և ընտանիքի անդամների խնամքի համար, ինչի հետևանքով նրանց կատարած վճարվող աշխատանքը լրիվ կախված է ընտանեկան ու աշխատանքային պարտականությունների համատեղման հնարավորություններից:

Ճնային գործերում կանանց և տղամարդկանց անհավասարությունը կրճատվում է



Սկանդինավիայի և Կանադայի բնակիչները վերջին 50 տարիների ընթացքում ամենաքիչն են ստիպված եղել սպասք լվանալ, արդուկ անել և կատարել տնային այլ պարտականություններ, մինչդեռ իտալուհիները և իսպանուհիները բոլորից ավելի հաճախ և շատ են աշխատում տանը, փաստում են Օքսֆորդի համալսարանի (Մեծ Բրիտանիա) գիտնականների կատարած հետազոտության տվյալները: «Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ մարդկությունն աստիճանաբար շարժվում է

դեպի տղամարդկանց և կանանց միջև տնային պարտականությունների ավելի հավասար բաշխում»,- ասում է Օրիել Սալիվենը Օքսֆորդի համալսարանից:

Սալիվենն ու իր գործընկերները հաստատել են ընդհանուր առմամբ տարածված պատկերացումը, որ ժամանակի չափը, որ կանայք ծախսում են տնային գործեր անելով, սովորաբար խիստ համեմատական է նրան, թե որքանով պահպանողական և ավանդապաշտ է հասարակությունը, որում նրանք ապրում են:

Այդ հետազոտության գլխավոր եզրահանգումն այն է, որ տնային գործերում կանանց և տղամարդկանց անհավասարությունը չի վերացել. կանայք միջինը 1-2 ժամից ավելի են ծախսում տանն աշխատելու վրա, քան դա անում են տղամարդիկ, իսկ որոշ երկրներում այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելի բարձր է: Օրինակ՝ Իսպանիայի և Իտալիայի բնակչուհիները տնային գործերի վրա միջինը մոտավորապես 180 և 140 րոպե ավելի են ծախսում, քան իրենց ամուսինները, մինչդեռ Դանիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի և Կանադայի բնակչուհիների համար այդ ցուցանիշը չի գերազանցում 60 րոպեն:

Ի՞նչ անել

«Ձեր դայակի համար կվճարի պետությունը»



Մշակման փուլում գտնվող «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թթ. ազգային ծրագիրը» ուղարկվել է պարունակում հանրապետությունում ծնելիության մակարդակը բարձրացնելու և երեխայի ծնունդից հետո կանանց վերադարձն աշխատաշուկա ապահովելու ուղղությամբ:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի ներկայացմամբ՝ ծրագրում տեղ են գտել նաև իրենց առաջարկած նորարարական մոտեցումները:

«Լախատեսվում են ծնողական պարտականությունների և աշխատանքի համատեղման ուղղությամբ մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, երեխայի խնամքն ապահովելու հետ կապված հնարավորությունների ընձեռում, ինչը ենթադրում է մինչև 6 տարեկան երեխաների խնամքի հաստատությունների ընդլայնում և բարելավում կան դայակի ծառայության վճարի մասնակի փոխհատուցում: Ըստ էության, Հայաստանում դայակի ինստիտուտ կստեղծվի, ինչը մեծ օժանդակություն կլինի աշխատաշուկա վերադարձող կնոջ համար:

Հաջորդը՝ մինչև 22 տարեկան հղի կան մայրացած ուսանող կանանց վարձավճարների որոշակի սուբսիդավորումն է: Նաև՝ մինչև 24 տարեկանը արդեն մայրացած կանանց համար, ովքեր չեն հասցրել բարձրագույն ուսում ստանալ, սակայն ունեն դրա ցանկությունը, սուբսիդավորվելու է մասնագիտական ուսուցման նախապատրաստման գործընթացը: Աջակցություն է նախատեսվում մինչև 30 տարեկան այն կանանց, ովքեր ունեն երեխաներ, սակայն աշխատաշուկա մուտք գործելու հետ ունեն որոշակի խնդիր, այսինքն՝ մինչև այդ երբեք չեն աշխատել: Նրանց համար կազմակերպվելու են մինչև 6 ամսվա ընթացքում մասնագիտական անվճար ուսուցումը և վերապատրաստումը գործատուի մոտ»,- պարզաբանեց Գարիկ Հայրապետյանը:

Ֆրանսիական «բեյբի բում»-ի գաղտնիքները



Վերջին 10 տարիների ընթացքում ճապոնացի ու կորեացի գործիչներն ու ուսումնասիրողներն առավել հաճախ ու կանոնավոր են սկսել այցելել Ֆրանսիայի ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտ՝ հասկանալու այն «բաղադրատոմսը», որը հնարավորություն տվեց Ֆրանսիայում ապահովել եվրոպայում ծնելիության ամենաբարձր մակարդակը՝ Իռլանդիայի հետ մեկտեղ, գրում է The Guardian-ը:

Նշվում է, որ Ֆրանսիացի մեկ կնոջը բաժին է ընկնում 2.01 երեխա, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու բնակչության կայուն վերարտադրություն: Ինստիտուտի գիտաշխատողները ցույց են տալիս ծնելիության աճի գծապատկերներն ու այն բացատրում Ֆրանսիայի կողմից իրականացվող պետական քաղաքականությամբ: Առեղծվածային ոչինչ չկա, բացի այն մոտեցումից, որով առաջնորդվում են Ֆրանսիայում ու սկանդինավյան երկրներում, և որն իր մեջ ներառում է գեներային հավասարության վրա հիմնված ժամանակակից ընտանիքի մոդելը ու հզոր պետական քաղաքականությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պտղաբերության ցուցանիշը բարձր է այն երկրներում, որտեղ կանայք աշխատանքի են դուրս գալիս, ցածր է այնտեղ, որտեղ կանայք ստիպված են մնալ տանը: Ծնելիության մակարդակը բարձր է այնտեղ, որտեղ ընտանիքի նորմերն ավելի ճկուն են, որտեղ երեխաների խնամքը լավ կազմակերպված է, որտեղ իրականացվում է երեխայակենտրոն ու գեներային հավասարությանն ուղղված քաղաքականություն:



Կինն ու կարիերան

Ուսում ստացած աղջիկներ.
ինչո՞ք է դասավորվում նրանց հետագա կյանքը



Գայանե. «Մինչև հիմա
մամայիս փեշի տակ եմ,
բայց չի թողնում...»

«Ազատության, անկախության մասին մի-
այն երազում եմ, ի՞նչ անկախություն... Իբր ինչ-
որ բաներից մամաս ուզում է ինձ պաշտպանել,
բայց ինչի՞ց՝ ես էլ չգիտեմ: Ամեն քայլս պիտի
զեկուցեմ թե՛ մամայիս, թե՛ եղբորս՝ ո՛ր զնացի,
ո՛ւմ հետ եմ և այլն»,- պատմում է 22-ամյա Գա-
յանեն: Նա մանկավարժական համալսարանի
3-րդ կուրսի ուսանող է: Տավուշի մարզից է,
ասում է, երբ ընդունվել էր համալսարան ու պի-
տի տեղափոխվել մայրաքաղաքում ժամանա-
կավոր բնակվելու, ծնողներն անհանգստացած
էին՝ բա ո՞նց են մե՞նակ ապրելու, բա վտանգա-
վոր է: Գայանեն պատմում է՝ մայրը ստիպված
աշխատանքից դուրս է եկել, որպեսզի դստեր
հետ տեղափոխվի Երևան, ու միասին լինեն:
«Խնդիրն այն չէ, որ մերոնք ինձ չեն վստահում,
ուղղակի ծնողներս ասում էին՝ բա մարդիկ ի՞նչ
կմտածեն՝ ջախել աղջիկը մե՞նակ է ապրում:
Երազում եմ մնալ Երևանում, աշխատել իմ
մասնագիտությամբ, որը շատ եմ սիրում, վեր-
ջիվերջո, գումար վաստակեմ, ազատ ու ան-
կախ, իմ համար ապրեմ, ոչ թե իրենց: Բայց մե-
րոնք արդեն իմ փոխարեն ճակատագիրս որոշ-
ել են, արդեն ուզողներ էլ կան, որոշում են, թե
ու՞մ հետ պիտի ամուսնանամ»,- պատմում է
Գայանեն: Իսկ ամուսնանալուց հետո էլ, ինչ-
պես ասում է երիտասարդ աղջիկը, դժվար
թե աշխատի: «Զգիտեմ, եթե բախտս բերի,
գյուղի դարձնում կաշխատեմ, բայց ընդել էլ
ի՞նչ առաջընթաց պիտի ունենամ»:

Գայանեն ասում է՝ աշխատանք էր գտել
ուսանողական տարիներում, դասերից հետո
մի քանի ժամվա աշխատանք էր, մտածում էր՝
համ ուս-
սարան-տուն ծանձրալի, իր խոսքերով
ասած՝ սպանող վիճակից դուրս կգար,
բայց ոչ, տնե-

ցները կտրականապես արգելեցին. «Մամա
ասեց՝ բա խի պետք ու հերո մեռե՛լ եմ, որ դու
զնաս աշխատես: Դեռո գրասենյակային գործ
գտա, էլի արգելեցին: Արդեն հոգնել եմ, էլ չեմ
պայքարում»...

Լիանա. «Ես ավելի
նախաձեռնող դարձա,
ինքնուրույն, ազատ...»

Եթե Գայանեն հաշտվել է իր՝ ծնողների
«պատանդի» կարգավիճակի հետ, ապա 25-
ամյա Լիանան պայքարը շարունակել է ու հա-
ջողության հասել: Լիանան ասում է՝ մինչև
Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտ ըն-
դունվելը, ծնողները, այսպես ասած՝ նրա
ամեն քայլին հետևում էին: «Թատերականից
առաջ համալսարան էի ուզում ընդունվել, երկու
ան-
հաջող փորձ ունեցա: Դեռո, որ տունը չնստեմ,
պարապ չմնամ, մայրս իրենց օֆիսում դաս-
վորեց, համակարգչային աշխատանք էի
անում: Մամայի հետ գնում էի գործի, մամայի
հետ տուն գալիս: Գժվելու բան էր, ասե՞նք՝
ծաղիկ էի ստա-
նում, մեկ էլ մերոնք սկսում էին՝ ո՛վ և
նվիրել, խի՞, պիտի տեղյակ լինե՞նք, կամ
էլ՝ եղ ո՛վ գան-
գեց, ի՞նչ ասում: Ընկերուհուս տուն էի
գնում, մեր կողքի շենք, դա մի պատմու-
թյուն էր դառ-
նում»: Լիանան ասում է՝ թատերական
ընդուն-

վել էլ տնեցիները միանշանակ չեն ընդունել՝
դերասա՞ն, ռեժիսո՞ր, չէ մի չէ: այսպես էին
Լիա-
նայի հարազատներն արծազանքել: «Նախա-
պես ոչ ոքի չէի ասել, որ գործերս թատերական
եմ տվել, թե չէ ամեն ինչ կանեին, որ հետ
վերցնե՛մ: Մի օր մտա տուն ու ասեցի՝ ընդունվել
եմ թատերական: Մայրս քիչ էր մնում խելագար-
վեր, ասեց՝ գո՛նե ուրիշ տեղ ընդունվե՛իր:
Կարճ ասած՝ ուրախություն չկիսեցին»,-
հիշում է նա:

Բայց այս ինստիտուտը երիտասարդ աղջ-
կա կյանքը, կարելի է ասել, կտրուկ փոխել է,
հեղափոխել է ոչ միայն Լիանային, այլև
ծնող-
ների մտածելակերպը: «Մերոնք հասկացան,
որ դա իմ երջանկությունն է, ու արդեն
եղ վե-
րահսկողություն, տարբեր բաների
նկատմամբ արգելք, տարբեր՝ վերացան:
Ես ավելի նախա-
ձեռնող դարձա, ինքնուրույն, ազատ:
Նույնիսկ Բաղրամյանի ցույցերին էի
մասնակցում, եղել է՝ գիշերները մնացել
եմ Բաղրամյանում, ծնողներիս սկզբում
դա դուր չէր գալիս, հայրս մի երկու անգամ
եկավ Բաղրամյան, ու էլ չէր արգելում
մնամ այնտեղ: Ես հիմա աշխատում
եմ, անգամ մե՛նակ ճամփորդում եմ,
երկրից դուրս եմ գնում մե՛ն-մե՛նակ,
ու մերոնք չեն ար-
գելում: Երիտ, էլ սկիզբը դժվար էր,
չեմուհուն էին անում, բայց ինձ
այլևս կապանքների մեջ պահելն
անհնար է»:

«Կանանց կրթությունն արժեք է, կարիերան՝ ոչ»


ԵՊՀ գեղերային հետազոտությունների և
առաջընթացի կենտրոնի տնօրեն Գոհար
Շահ-
նազարյանի դիտարկմամբ՝ կրթություն
ստացած աղջիկների հետագա կարիերայի
հետ կապ-
ված լուրջ խնդիր կա: Երբ հարց են տալիս,
թե կրթությունը որքանով է կարևոր աղջիկների
հա-
մար, գրեթե 80%-ն ասում են, որ կարևոր է:
Այսինքն՝ համարում են, որ կրթված կինն
արժեք է ներկայացնում մեր հասարակու-
թյունում, բայց երբ հաջորդ հարցն էինք
տալիս՝ իսկ որքանով է կարևոր կարիերան,
թիվը երկու անգամ իջնում է: Միայն մոտ
40%-ն է կարևորել կարիերան: Մինչդեռ
կարիերայի հարցը կարևոր է, որովհետև,
ի վերջո, այդ կրթությունն ինչ-որ
ձևով պետք է տրամաֆորմացվի և ծառայի
հասարակությանը, այսինքն՝ աշխատաշուկայում
այդ ամենը կի-
րառվի, արժեք ստեղծվի: Բացի այդ,
կարիերան կարևոր է նաև կնոջ
ինքնադրսևորման համար,
ի վերջո, այդ կապիտալը, որ ձեռք է
բերել կինը, նրան էլ պիտի ծառայի:

Կարծրասիտեր



Ինչպե՞ս են ազդում կանանց ու տղամարդ-
կանց զբաղվածության կարգավիճակի վրա
հա-
սարակությունում առկա կարծրատիպերը:
Ի՞նչ խոչընդոտների են բախվում կանայք՝
դուրս գա-
լով աշխատանքի շուկա: «Կանանց և տղամարդ-
կանց տնտեսական գործունեությունը
Չայաս-
տանում» հետազոտությունը փաստում է, որ
հա-
սարակության մեջ առկա կարծրատիպային
պատկերացումները կնոջ դերի և տեղի մասին
լուրջ խոչընդոտ են կանանց համար՝ սահմանա-
փակելով նրանց հնարավորությունները
կյանքի տարբեր ոլորտներում ինքնադրսևորվելու
առու-
նով: Կնոջ ստորադաս կարգավիճակի մասին
ըն-
կալումները հիմք են հանդիսանում կանանց
նկատմամբ խտրականության տարբեր
ձևերի հա-
մար: Դրանից տուժում են ոչ միայն կանայք,
կո-
րուստներ է կրում ողջ հասարակությունը,
քանի որ կանանց ներուժը լիովին չի օգտագործվում:

Չայ հասարակությունում կնոջ և տղամարդու
դերերի մասին պատկերացումները կառուցվում
են երկու դատողությունների շուրջ: Առաջինը՝
որ կինը տան ներսի պատն է, տունը նրա
տարածքն է, նրա գլխավոր խնդիրը ընտանիքի,
օջախի պահպանումն է, երեխաների
խնամքն ու դաստի-
արակությունը: Երկրորդը՝ որ տղամարդը
տան դրսի պատն է և պատասխանատու է
ընտանիքի նյութական բարեկեցության
համար: Եվ թեպետ այս մոդելը այլևս չի
աշխատում նոր ժամանակներում, և այսօրվա
տնտեսական պայմաններում ըն-
տանիքները, հատկապես երիտասարդ
ընտանիք-
ները, չեն կարող գոյատևել մեկ աշխատողի
պա-
րագայում, կարծրատիպերը դեռևս չեն
կորցրել իրենց ուժը՝ սոցիալական պահանջներ
ներկա-
յացնելով տղամարդկանց ու կանանց:



Այս դատողությունը հիմք է տալիս մեկ այլ
կարծրատիպի. աշխատող կինը չի կարող
լավ մայր լինել: Ու եթե կանանց 91%-ը
գտնում է, որ աշխատող կինը կարող է
լավ մայր լինել, ապա տղամարդկանց
միայն 17%-ն է այդպես կարծում:



Տղամարդկանց համար կարիերա ունենալը
կարևորում են հարցվածների 74%-ը,
իսկ կնոջ համար՝ միայն 43%-ը: Լավ
մասնագետ լինելը ավելի կարևոր է
տղամարդկանց, քան կանանց
համար:



Թեպետ լավ կրթություն ստանալը հայ
հասա-
րակության կարծիքով հավասարապես
կարևոր է և՛ աղջիկների, և՛ տղաների
համար: Իսկ ահա հարուստ լինելը շատ
ավելի կարևոր է տղամարդկանց,
քան կանանց համար:

«Ոչ կանացի» մասնագիտություն

Երկու դիմանկար ցուցահանդեսից

Օպերատոր, դիրիժոր, փր-
կարար, հետախույզ... այս
բառերը շատերի մոտ զու-
գորդվում են տղամարդու
կերպարի հետ: Բայց կան կա-
նայք, ովքեր կամա թե ակա-
մա որոշել են դառնալ փոփո-
խության առաջամարտիկնե-
րը: Ընտրելով այսպես կոչ-
ված «տղամարդկային» մաս-
նագիտություններ՝ այդ կա-
նայք կտրում են կարծրա-
տիպերը և հավասարությանն
ուղղված իրենց քայլն անում՝
ճանապարհ հարթելով նաև
այլ կանանց համար: Ստորև
ներկայացվող երկու դիման-
կարները «Հավասար» քարո-
զարշավի շրջանակում ար-
ված «Ոչ կանացի մասնագի-
տություն» լուսանկարների
շարքի հերոսուհիներն են ...



Եղբոր երազանքի հետևից...

Ծնունդով գյուլնրեցի Կարողուհի Մինասյանը
մինչև հիմա էլ հուզմունքով է խոսում իր երկրորդ
մասնագի-
տությունը ընտրելու մասին:
- Ավերիչ երկրաշարժի ժամանակ եղբայրս
զոհվել է, ու ես պարզապես ուզեցի իր
երազանքը կատարվել: Խնքավարությունը,
դիրիժորությունը ընտրելու հար-
ցում նախախնամություն էլ կա: Գիտե՞ք՝
երկրորդ կուր-
սում իմ ստուգման գրքույկի մեջ Կարողուհի
Մինասյանի փոխարեն սխալմամբ Կարդան
էին գրել. եղբորս
անունն է, ես այն չեմ համձեռնել ու
նվիրել եմ մայրիկիս...



Երբ սիրում ես քո գործը...

Մոտ 12 տարեկան էի, մի օր մայրիկիս
մոտեցա ու ասացի, թե ուզում եմ, որ
ամուսնանալիս ամուսինս ինձ ոչ թե
ոսկի նվիրի, այլ՝ ֆոտո ու կինոկամերա:
Այս պատ-
մությունը ժպիտով է հիշում «Արարատ»
հեռուստաընկե-
րության օպերատոր Միլենա Պողոսովան,
ով խոստովա-
նում է, որ երևի թե երբեք օպերատոր
չէր աշխատի, եթե չլիներ մի պատահականություն...
- Մինչև հիմա էլ ուրախ եմ, որ այս
աշխատանքն եմ անում, քանի որ
նրա միջոցով աշխարհը տեսնում եմ
մի քիչ այլ աչքերով...



Այս համարը պատրաստվել է Օքսֆամ և «ՕքսԶեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի աջակցությամբ «ՀԱՎԱՍԱՐ» քարոզարշավի շրջանակներում:
Գլխավոր խմբագիր՝ Թամարա Գովնաթանյան
Էլ. հասցե՝ womennetam@gmail.com

Համարի վրա աշխատել են՝
Լիա Խոջոյանը, Անուշ Ներսիսյանը,
Լալա Տեր-Ղազարյանը,
Մարիաննա Ղահրամանյանը